ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 6 արտահերթ նիստի «Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 09-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 20-Ն և Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 7 հերթական նիստի «Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին» N 24-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2017 թվականի սեպտեմբերի 08-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2017 թ. սեպտեմբերի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 27

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի սեպտեմբերի 12-ին ժամը 10^{00}-ին Պտղնիի համայնքապետարանում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ, հետևյալ օրակարգով՝

1) Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 10-ի N 24-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող 0.1038 հա գյուղատնտեսական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 28

ԻՆԵՍՍԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ինեսսա Էդուարդի Սիմոնյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում 1992 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տունը, ավտոտնակը և կաթսայատունը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերի և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Ինեսսա Էդուարդի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում 1992 թվականին ինքնակամ կառուցվել է 852.81 քմ մակերեսով բնակելի տուն, 24.43 քմ մակերեսով ավտոտնակ և 24.31 քմ մակերեսով կաթսայատուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11 և 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ինեսսա Էդուարդի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Պտղնի 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Ինեսսա Էդուարդի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 852.81 քմ մակերեսով բնակելի տունը, 24.43 քմ մակերեսով ավտոտնակը և 24,31 քմ մակերեսով կաթսայատունը համարել օրինական: Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 13
գ.Պտղնի